ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հուլիսի 2026 թվականի N 1114 - Ա

ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ
ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 225-րդ և 605-րդ հոդվածները, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 9-րդ հոդվածի 5-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության քաղաքացի Լևոն Վարթան Դեր Բեդրոսյանի (անձնագրի համար՝ AT0423037, 24.03.2020 թ., տրված՝ 099-ի կողմից) (այսուհետ՝ քաղաքացի) սեփականությունը հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, համայնք Գառնի, Գեղարդի խճուղի, 3-րդ փակուղի, 1 հասցեում գտնվող, 817.64 քառ. մետր ընդհանուր մակերեսով շենք-շինությունների, ինչպես նաև դրանց զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար հատկացված 0.26 հա մակերեսով հողամասի (2021 թվականի սեպտեմբերի 22-ին տրամադրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 22092021-07-0062, շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեք՝ 46,651,852.0 դրամ, այսուհետ՝ գույք 1) և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, համայնք Գառնի, Գեղարդի խճուղի, 2-րդ փակուղի, 6/1 հողամաս հասցեում

գտնվող 0.1 հա մակերեսով հողամասի (2019 թվականի մայիսի 7-ին տրամադրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 07052019-07-0017, շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեք՝ 2,887,500.0 դրամ, այսուհետ՝ գույք 2) նվիրաբերությունը Հայաստանի Հանրապետությանը և ամրացնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ գորգերի թանգարանի հիմնադրման և գործունեության ապահովման նպատակով՝ պահպանելով գույքի 1-ի տարածքում գտնվող բնակելի տանը քաղաքացու բնակելի տարածության օգտագործման իրավունքը:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում քաղաքացու հետ կնքել սույն որոշման 1-ին կետից բխող գույք 1-ի և գույք 2-ի նվիրաբերության պայմանագիր՝ դրանում սահմանելով՝

1) դրույթ՝ գույք 1-ում քաղաքացու կողմից բնակելի տարածության օգտագործման իրավունքի վերաբերյալ.

2) որ պայմանագրի կնքման և դրանից բխող ծախսերը ենթակա են իրականացման կոմիտեի միջոցների հաշվին, իսկ նվիրաբերության պայմանի հսկողությունն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:

3. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված պայմանագրի կնքումից հետո երկամսյա ժամկետում քաղաքացու հետ համատեղ ապահովել գույք 1-ի և գույք 2-ի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ